

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դաւառական զեմւոյսներ չի խնդրուած ցանկութիւնները:— Գիւղացիական հար-
ցը:— Կենտրոնի ուժաւորման մասին կազմած յանձնաժողովը:— Դրա զեմ-
ւոյսի անդամների զեկուցումը:— Տեղական երեսփոխանի կախումը ընդհանուր
պաշտաններից:— Գիւղացիական օրէնքների փոփոխութեան նախագիծը:—
Անդրկովկասի գիւղացիների առանձնապէս շատ զեկուցումները եւ գիւղացիական եւ
իւրաքանչեւ ընկերութիւնների կառուցման շուրջը եւ օրէնքների նախագծի
նկատմամբ:— † Ներսէս Դաւթեան:— Պաշտօնական կազմակերպութիւն Ալեքսան-
դրօպոլի եւ Ղարսի մասին:— Ֆինանսական գրադարան-ընթերցարանները:— Մա-
մուլի վերաբերեալ կազմակերպութիւններ:

Ռուսական տեղային առանձնապատուի ինքնավարութիւ-
նը կամ զեմմտովոյն իր հաստատութեան օրից (1869 թ. յու-
նուարի 1-ի պրոտեկտիէ) բաւական մեծ փոփոխութիւնների են-
թարկուեց. այժմ նրա գործունէութիւնը սահմանափակուած է
1890 թ. յունիսի 12-ին հրատարակած կանոնադրութեամբ, որ
կրճատեց ձայնաւորների թիւը, ուժեղացրեց ազնական ներ-
կայացուցիչների ազդեցութիւնը, ընտրողական ժողովներին
դասակարգային կազմութիւն տուեց եւ աւելի կատարեալ դար-
ձրեց զեմմտովոյն կախումը կենտրոնական իշխանութիւնից:
Այժմ եւրոպական Ռուսաստանի 34 նահանգներ իրանց 359
գաւառներով ունեն զեմմտովային հաստատութիւններ:

Զեմմտովային նոր կանոնադրութեամբ աւելի սահմանա-
փակուեց գիւղական դասակարգի ներկայացուցչութիւնը զեմ-
մտովային ժողովներում. այժմ, երբ կառավարութիւնը առանձին
ուշադրութիւն է դարձնում գիւղացիների զրուցումը բարե-
փելու գործում, հասարակական կարծիքի իւրաքանչիւր արտա-
յայտութիւն այդ հարցի վերաբերմամբ յայտնի կարեւորութիւն
է ստանում: Անցեալ ամսուանից եւրոպական Ռուսաստանի

գեմատվային գաւառներում տեղի են ունենում գաւառական ժողովներ: Այդ ժողովներից շատերում յարուցուեցան մի քանի հիմնական հարցեր, արտայայտութիւն գտան հասարակական որոշ տրամադրութիւններ: Գաւառական ժողովներից յետոյ տեղի են ունենալու նահանգական գեմատվային ժողովներ: Օրէնքով իրաւունք է տրուած այդ ժողովներին խնդիրքներով և միջնորդութիւններով դիմել բարձրագոյն իշխանութեան. հետեաքար յարուցած հարցերից գոնէ մի քանիսը ընթացք կը ստանան:

Գաւառական ժողովներում յարուցած ընդհանուր հարցերից մամուլի ուշադրութիւնը գրաւեցին գոյութիւն ունեցող ընտրողական սխտեմի որոշ փոփոխութիւնները, ցանկալի է համարուում ցենզի չափի նուազացումը, ընտրողական իրաւունքի տարածումը և կանանց վրայ, գիւղացի ձայնաւորների թւի աւելացումը նային:

Ռուս մանաւանդ կենտրոնական նահանգների գիւղացիները զբոլթիւնը առանձին հոգս էր պատճառում և կառավարութեան. նկատելով այդ գիւղացիների հարկատուութեան ոյժի սպառումը՝ Բարձրագոյն որոշմամբ կազմուած էր պետական քարտուղար, սենատոր Կոկովցեւի նախագահութեամբ յատուկ կոմիտսիա, մասնակցութեամբ գեմատվային մի քանի գործիչների: Կենտրոնի ուժասպառութեան հարցը *) այդպիսով առանձին քննութեան առարկայ էր դարձել:

Այժմ վերջացած է այդ կոմիտսիայի պարապմունքը, և С.-П. Вѣд. լրագրում առաջ է բերուած նրա գեմատվային անդամների մանրամասն գեկուցումը քննութեան առարկայ եղած հարցի մասին:

Վերև յիշած կոմիտսիային առաջարկուած էին երկու ընդհանուր հարցեր. նախ թէ՛ ինչո՞ւ գիւղատնտեսական Ռուսաստանի կենտրոնական մասը աւելի է ուժասպառուել, քան ծայրերը և երկրորդ՝ թէ՛ ի՞նչպէս ուղղել այդ զբոլթիւնը: Մանրամասն քննելով այդ հարցերը կոմիտսիան եկել է այն եզրակացութեան որ տեղական սպեցիֆիկ միջոցներով շտափիչ կարելի է օգնել ցաւին և պէտք է ուշադրութիւն դարձնել ընդհանուր պայմանների փոփոխութեան վրայ: «Միայն լուսաւորութիւնը, անձի ինքնագործութեան բարձրացումը ուժեղացնելով և բազմապատկելով գոյութեան կուռ միջոցները, բարձրացնելով կենսական եռանդը, լաւագոյն ապագայի յոյս են տալիս» — ասուած է այդ գեկուցման մէջ: Ամենամեծ նշանակութիւն է տրուում գիւ-

*) «Մուրճ» 1901, № 1, ներք. Տես.

դական դասակարգի իրաւական կողմի բարեփոխութեան: Գործադրուող օրէնքներով գիւղացին միւս դասակարգերից տարբերում է իրաւական շատ սահմանափակումներով: Եւ գիւղացիական իրաւունքների բեֆորմների հարցով այժմ զբաղուած է նաև ներքին գործոց մինիստրութիւնը: Մայրաքաղաքի լրագրների ասելով գիւղատնտեսական կարիքների մասին Առանձին Խորհրդակցութեան (տես «Մուրճ» 1903 թ. № 3) *) նախագահի կարգադրութեամբ կազմում է մի ամփոփում՝ գիւղացիական հիմնարկութիւններին և գիւղացիական իրաւասութեան վերաբերեալ այն որոշումների, որ իր ժամանակին արել էին՝ գիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքների քննութեան առիթով՝ տեղական կոմիտեաները:

Այդ ամփոփումը պատրաստում է մինիստրների կոմիտեի համար, ուր ներքին գործոց մինիստրը ներկայացրել է նահանգական նոր կոմիտեաներ հիմնելու նախագիծը, — կոմիտեաներ, որոնց առաջարկուելու են ներքին գործոց մինիստրութեան մէջ կազմուած գիւղացիական օրէնքների փոփոխութեան նախագիծը:

Այդպէս ուրեմն թէ զեմսովօները, թէ ներքին գործոց մինիստրութիւնը և թէ Առանձին Խորհրդակցութիւնը լուրջ կերպով զբաղուած են գիւղացիական օրէնքների բարեփոխութեան հարցով: Անշուշտ վերև յիշած նոր նահանգական կոմիտեաներ՝ այդ հարցի քննութեան համար՝ կը լինեն և Անդրկովկասում, ինչպէս եղան Առանձին Խորհրդակցութեան տեղական կոմիտեաներ: Այն ժամանակ մենք տեսանք թէ ինչ ծառայութիւն աշխատեց ցոյց տալ գործին Կովկ. Գիւղատնտեսական ընկերութիւնը: Այժմ, երբ պէտք է քննուի գիւղացիների իրաւունքների հարցը, բնական է սպասել որ թէ նոյն գիւղատնտեսական ընկերութիւնը և թէ Իրաւաբանական ընկերութիւնը չեն զլանալ մասնագիտօրէն պարզելու նաև մեր երկրի գիւղացիների իրաւական պայմանները, մանաւանդ որ Անդրկովկասի կեանքում գիւղական դասակարգը դեռ պահպանում է մի քանի առանձնայատուկ պայմաններ, որոնք վերացուած են կենտրոնական նահանգներում և առաջադիմութեան խոչնդոտ են հանգիստանում. բաւական է յիշել դրանց կախումը կալուածատէրերից և հողաբաժինների յետ գնման օրէնքի կատարեալ բացակայութիւնը: Եւ գիւղացիները քիչ տոկոս չեն կազմում մեր ազգաբնակչութեան մէջ: Վիճակագրութիւնը ցոյց տուեց որ Կով-

*) Տես նաև 1902 թ. № 4 և 6.

կասի 10 միլիոն ազգաբնակչութեան հազիւ 1 միլիոնն է ապրում քաղաքներում, իսկ մնացածները գիւղի մարդիկ են:

Իրաւաբանական յետամնացութեան հետ ձեռք ձեռքի տուած գնում է և մեր ժողովրդական կրթութեան ողբալի վիճակը: Այս տարուայ ապրիլի 25-ին Կովկ. գիւղ. ընկ. ընդհանուր ժողովում պ. Ալիբէգովի կարդացած զեկուցումից մենք իմանում ենք*), որ Սիբիրից և Թուրքեստանից յետոյ սկզբնական կրթութեան նկատմամբ Կովկասը վերջին տեղն է բռնում Ռուսական կայսրութեան մէջ:

Հոկտեմբերի 28-ին Թիֆլիսում վախճանուեց հայոց ծխական դպրոցների նախկին ուսուցիչ, «Մշակ»-ի թղթակից և գաւառական եռանդուն գործիչ Ներսէս Դաւթեանը մի այնպիսի հասակում, երբ ոյժն ու եռանդը միացած փորձառութեան հետ աւելի բեղմնաւոր են դարձնում մարդկանց հասարակական գործունէութիւնը: Գողթան գաւառի Հանդամէջ գիւղում ծնուած և իր կրթութիւնը Ներսիսեան դպրոցում աւարտած այդ համեստ գործիչը «Մշակ»-ի շկոլայից անցած մի տիպ էր. և ոչ մի ճահճացած կեանք չէր կարող նրա մէջ լռեցնել բողոքողի ձայնը, ժողովրդական շահերի համար աշխատելու տենչը: Նոյն-իսկ Բագուն, որ իր մթնոլորտով կերպարանափոխել է այնքան ազնիւ ձգտումներ և տրորել այնքան երիտասարդական իդէալներ՝ չը կարողացաւ հիմնովին փոխել այդ մարդուն և հանգցընել նրա սրտում հասարակական օգտի համար բոբրեքուող կայծը: Անշուշտ աննկատելի չի կարող անցնել մեր հասարակական կեանքում մի այդպիսի համեստ ոյժի չքացում. այդ՝ յաճախ աննկատելի ոյժերն են, որոնց շնորհիւ կատարւում է մասսայի առաջադիմական կերպարանափոխութիւնը. օրհնուի՛ այդպիսի համակրելի գործիչների յիշատակը:

Լ. Ս.

23 նոյեմբ.

*) Առանձին զբոյժ ևս լոյս է տեսել այդ զեկուցումը—И. Г. Алибеговъ: «Народное Образование на Кавказѣ».